

հայ եկեղեցուն, ոչինչ չեն խնայել նորս պայծառութեան և փայլի համար.

Պարերի ընթացքում Ա. Էջմիածինը մասնակցել է իւր ժողովութիւն տառապանքներին և իր հայելի արտացոլացրել իւր մէջ Հայոց ազգի թշուառութեան պատկերը, երբ Հայոց աշխարհը թշնամիներից քար ու քանդէ եղել և ամայացել, Ա. Էջմիածինն էլ «ոչխարի փարախ և ողնիների բնակարանն է գարձել (Ստ. Օքր. ոզը ի Ա. Էջմիածին), բայց Հայոց ազգի շինութեան հետ շէնցել և պայծառացել է և իւր խնամքի հանդերձը տարածել իւր որդոց վերայց».

Մանաւանդ վերջին կէս գարը Ա, Էջմիածինը փոքրինչ շունչ առնելով Պարսից ու Տաճկաց ճնշումներից և հետզհետէ հարատանալով՝ իւր ուժերը ներածին չափ՝ Հայ հօտի բարօրութեանն է նուիրել իւր ջանքերը: Մ. Աթոռի ամենից երեելի Հայրապետները իրենց միակ հոգու առարկան են դարձուցել հայ ժողովութիւնը կրթութիւնը և բարոյական վերակենդանութիւնը:

Եւ այս խնամքը, այս հոգու ի զուր չէ անցել ժողովութիւնի համար, նա աւելի սերտութեամբ յօտեցել է Ա. Էջմիածնին, ջերմ կերպով սիրել և իւր լուման չի խնայել հասարակաց շինութեան գործում: Եւ այս կողմից աւելի աչքի են ընկնում վերջին 1900-ից 1903 թուականները, որ մեր կեանքի, յատկապէս եկեղեցու համար շատ նշանաւոր տարիներ պիտի ընդունել: որքան խոստումներով լի առաջինները, այնքան տխուր և չարաբաստիկ վերջինը, մանաւանդ վերջինիս աշունը:

Անմոռանալի են այն առատ նուերներն ու խոստումները, որ հետզհետէ իրականանում էին: Մ. Աթոռի ճեմարանի՝ հիւանդանոցի ծախոր քաշել և կանգնեցրել էին արդէն թուամայեան եղբարք: Մի խումբ Բագուեցիք մըտադրուել էին Հայրապետի անշուր բնակարանի տեղ վայելուչ վեհարան շինել և արդէն աւագն ու քարերն էին կլում: Այս պատրաստութեանց մէջ վերայ հասաւ Ա. Էջմիածնի 1600 ամեայ յօրելեանը, դժուարանում ենք

Նկարագրել այն ոգեսրութիւնը, որ ամէն մի բանիմաց անձն զգում էր, երբ նայում էր Ս. Էջմիածնին և մտքով անց էր կացնում այն 1600 երկար տարիների շարքը, որ մարտիրոս Հայ եկեղեցին ապրել էր, տարիներ անդռւլ մաքառման, կոխւների և հոգացողութեան այն տառապեալ որդոց համար, որոնք ինչպէս մի անքոյթ նաւահանգիստ պատսպարուրուել են թշնամու կործանիչ փողորիկներից։ Տասն և վեց դար . . . քանի քանի անլուր աղէտներ, խաչ, հալածանք . . . և ինչքան աննկուն հովիւներ և անձնուրաց սպասաւորներ չի տուել Ս. Էջմիածնինը ազգի ու հօտի պաշտպանութեան համար . . .

Ս. Էջմիածնը պատրաստում էր վայելուչ հանդիսով տօնել իւր 1600 ամեայ կեանքը. և ինչ աւելի վեհ և սրբազն հանդէս կարող էր ցոյց տալ իւր սիրելի որդոց քան քան սրբալոյս միւռոնի օրհնութիւնը, որով հայր Հայ-քրիստոնեայ է դառնում։

1903-ի «Արարատիս ապրիլ-յուլիս համարներում «Օրհնութիւն սրբալոյս միւռոնի» վերնագրով մի հրաւեր յայտարարութիւն էր տպուում, որով ծանուցանում էին «առաջիկայ սեպտեմբերի 28-ին սրբալոյս միւռոնի օրհնութիւնը կատարել» և օր առաջ հրաւեր էր կարդացուում նաև ի սփիւռս աշխարհի տարածեալ հայ ժողովրդեան, որի իւրաքանչիւր անդամը Միածնի իջման տաճարում օրհնուած Ս. միւռոնի դրոշն է կրում իւր ճակատին և այնպէս միանում Քրիստոսի հօտին» և յիշեցնում մի և նոյն ժամանակ, «1600-րդ տարին է բոլորում այն յաւերժայիշատակ օրից, երբ երկնոյին ցուցմամբ հրաշակերտ տաճարի լուսեղէն կամարները ձգուեցան» (1903 Արարատ ապրիլ-յուլիս)։

Գալիք ու խտաւորներին արժանաւոր ընդունելութիւն ցոյց տալու համար՝ ընտրուում է մասնաժողով։ Ս. Էջմիածնի ժողովրդական մեծ նշանակութիւնը ժամանակակիցներին պարզելու համար ժողովուում և տպագրուում են աշուղների երգերում Ս. Էջմիածնի վերաբերեալ կտորները։

Պատմական այս խորհրդաւոր բողեի ուրախութիւնը կատարեալ լինելու համար կարծես՝ լուր է տարածուում, թէ Տփխխանցի Աղեքսանդր Մանթաշեանը պատրաստակաւութիւն է յայտնել նորօգել Ա. Էջմիածնի տաճարը Յետոյ հետեւում են իրական ապացոյցներ, գալիս են յիշեալ պարսիկ կողմից երկու անձնիք Պ. Յովսէփ Տիգրանեան՝ Ճարտարապետ Տ. Ռոտինեանց և Ա. Էջմիածնը յօտիկ առագայում վերանորոգուած ու պայծառ տեսնելը ամէն կառկածից գուրս էր արդէն։ Դժուար կարելի է մոռանալ այն ժողովները, չերմ վիճարանութիւնը և գոհ դէմքերը, որով ցոյց էր արուում այն վառ հետաքրքրութիւնը, թէ ինչ կերպ և ինչ ոճով պիտի կատարուի վերանորութիւնը և ինչ պէտք է անել, որ Մայր տաճարը իւր վեհութեան հետ իւր անուան արժանի շքեղութիւնն առանց։ Պ. Մանթաշեանի այս դիտաւորութիւնը ամբողջովին կլանել էր միաբանութեան ուշագրութիւնը, չնայած, որ մի ուրիշ նշանաւոր գործ ևս՝ արժանի յիշատակութեան սկսուել էր։

Բագուարնակ Դաւիթ Բէկ Աւան իւղբաշեանը գնել և Էջմիածնի Մատենադարանին էր նուիրել հանգուցեալ Աղեքսանդր Երիցեանի մատենադարանը և յիշատակ իւր հանգուցեալ ամուսնու և յօժարութիւն էր յայտնում։ շինել իւր հաշուազ (15,000 բուրլու) մի մատենադարան։ և՝ որպէս զի գործը շուտով զլուխ գայ՝ հէնց սկզբից տալիս էր 5000 բուրլի Մեսրոպ վարդապետին, խոստանալով 10,000 ր., էլ հետզհետէ ուղարկել (տես Արարատ 1903 Ապրիլ)։ Պ, իւղբաշեանը իւր նամակում խնդրում էր Վեհափառ Կաթողիկոսին, իւր նուիրած գումարը գործադրել հետեւեալ եղանակով ա) մասնագէտ ճարտարապետների յանձնել շինութեան յատակագիծ կազմելը, բ) կազմել նախահաշիւ նշանակուած գումարի համեմատ և գ) շինութիւնը ընդունել նուէր յանուն Դաւիթ Բէկ իւղբաշեանի։ Մատենադարանը պիտի շինուէր «վանքի պարիսպներում Վեհափառ Կաթողիկոսի ցոյց տուած տեղը»։ (Արարատ 1903 Ապրիլ նամակ Դաւիթ Բէկ Աւան իւղբաշեանի)։

Հարկաւ պակաս յարգանաց հաւաստիք և նուազ սիրոյ նշան չէր Քերոբէ Պատկանեանի որդու՝ Ս. Պատկանեանի իւր հօր գրադարանը դարձեալ Եջմիածնին նուիրելը. որ ոչ միայն հարստանում էր Մայր Աթոռի գրադարանը, այլ և կրկին անդամ՝ հաստատուում էր այն փաստը, թէ Ս. Եջմիածնին է այն որբազան վայրը, որ արժանի է իւր մէջ ամփոփելու հայու ամենից նուիրական և քաղաքակրթութեան աւանդները։ Անշուշտ մեր այս տողերը կարդացողը, եթէ մօտ է Ս. Եջմիածնին՝ հիասթափուած պիտի հարցնէ իւրովի՛ ուր մնացին այդ խոշոր խոստումները, ոչ Ս. Եջմիածնայ տաճարն է նորոգուել, ոչ մատենադարանն է կառուցուած։

Ինչպէս այն սուրբ սգեսրութեան նոյնպէս և շինութեանց ձեռնարկութեան վերայ սառը ջուր ածեց այն ժամանակի Ռուսաստանի քաղաքական ճնշումը։ Վաղուց մէկ մէկ խլում էին մեզանից մեր յառաջադիմական գործօնները, դպրոցներ, հրատարակչական և բարեգործական ընկերութիւններ, հայ մամուլ կամ բոլորովին խափանուած կամ այդ վիճակին հասցրած, մնացել էին եկեղեցական կալուածները և յատկապէս Եջմիածնի շարժական ու անշարժ գոյրը. և մի դառն ծազրի համար հէնց Եջմիածնի 1600 ամեայ յօրելեանը կատարելու օրերին՝ խլեցին այն Այդ դեռ իբր թէ քիչ էր, օրէնքով արգելուում էր նուիրաբերութիւն և բարեգործութիւն յանուն Մայր Աթոռի. և այսպէս սկսուած և սկսուելիք գործերը կանդ առան։ Սկսուեցաւ մաքառման շրջանը, որ գարձեալ ցոյց տուեց հայի սէրը գէպի իւր խնամու մայրը։

Բանդ, աքսորանք, մահ չկասեցրին հային այս անհաւասար կռուում։ Երկու տարի ժողովուրդը ծեծուեցաւ, տուգանքի ենթարկուեցաւ, ամէն վիշտ ու հալածանք կրեց։ Նիւթապէս և բարոյապէս ճնշուած՝ նա իւր լուման չխնայեց Ս. Եջմիածնը պահելու համար, ոչ միայն վանքը, այլ և ճեմարանը իւր ընթացքից չդադարեց և սաների թիւը փոխանակ պակասելու՝ այդ տարիներին աւելացան։

Սրտաճմլիկ բայց մի և նոյն ժամանակ յոդնանշան էր տեսնել Ա. Էջմիածնի շրջակայ գիւղերի սայլերը առոյտով (եօնֆայ) և յորենով բեռնած վանքին բաժին բերելիս նուերը իշխան Գոլիցինը արգելել էր, բայց Ալիքեղլուեցին, Այլանլուեցին, Աղաւնատունցին և այլք իրենց ցուրենից ու խոտից բաժին էին բերում առանց վախենալու բանդից ու աքսորից։ Այս սիրոյ և հարազատութեան անձնուրացութիւն չէր Գիւղի տղէտ վախկոտ և արհամարհուած երէցփոխը, քահանան, որ մի պրիստաւ կամ նոյն իոկ սրաջուու տեսնելիս ստրկօրէն հնազանդուում էին, եկեղեցու գործերի մէջ չէին քաշուում դաւառապետից ու նահանդապետից։ Նրանց սիրտ ու լեզու տուողը դարձեալ եկեղեցու սէրն էր, նման այն ճնճղուկին, որ երբ խոռում է նորա սիրոյ և պաշտպանութեան զգացմունքը, չի քաշուում յարձակուել որսի շան վերայ անդամ։

Ենչպէս կարկտարեր ամպ կամ փոթորկալից ու սեղիչեր անցաւ եկեղեցու գլխով այդ արհաւիրըն էլ։ Հայոց քաղմաշարչար եկեղեցին այդ վիշտն էլ թաղեց միւս մշտերի ծոցում, դարձեալ տեսաւ պայծառ արե, կարմիր առաւօտ։ Ոչ միայն եկեղեցական դոյրերը յետ տրուեցան, այլ և այն բոլոր տղգային հիմնարկութիւնները, որ Գոլիցինի և նմանների ճնշող ու հալածող քաղաքականութիւնը խլել էր։ Յետ դարձրին մեր բարեգործական հաստատութիւնները, եկեղեցուն յանձնեցին զայն ասպարէղ լուսաւորութեան և բարոյական կրթութեան, շնորհեցին նրան Տէր եւ Տնօրէն լինելու իւր և իւր հօտի բաղդին, բայց

Այս օրացիւ առաջ էլ իսկապէս պէտք է կանգ առնել, որովհետեւ դրանով բացուում է սխալների ու եկեղեցու փորձութեան մի անդունդ, որի յատակը դժուար է որոշել։ Հայ եկեղեցուն մասնաւոր աղատութեան հետ մտնում են քաղաքական աղատագրական հովերը։ Զապուած ու գաղտնի ձգտումներ՝ շատ անդամ ճնունդ անմիտ տեսութիւնների և սխալ ծանօթութեանց՝ հրապարակ են իջնում։ Քանդելու տեհնչը՝ խելագարութեան հասած՝ ձեռք է բարձրացնել տալիս մեր նուիրական զգացմունքների և

Հաստատութեանց վերայ, Յարձակման և պաշարմամբ գրաւելու ջերմ ցանկութիւնը ուղղում է նեղինակութիւնները ոչնչացնելու և յատկապէս Մայրենի եկեղեցու դէմ։ Դեռահաս պատանիներ, նոյն եկեղեցու հովանու տակ պատապարուած դպրոցի սաներ, անդիր սերտած ֆրազներ է, որ շպրտում են աջ ու ձախ և գիւղից գիւղ ընկած՝ իբր նոր առաքեալներ՝ հասկացնում են հայ գիւղացուն, որպէս թէ եկեղեցին է նորա թշուառութեանց աղքիւրը. քաղաքական ազատութեան, նիւթական բարօրութեան և լուսաւորութեան պատուղները վայելելու ամենից մեծ արգելքն է եղել այն։

Այս մանկական համերգին ձայն էր պահում և հրապարակախօսութիւնը, կապանքից աղատուած՝ իւր գոհարներն էր ի վաճառ հանել, կրակի վերան իւղ ածելով։ Այս նոր առաքելութեան գլուխ և զեկավար էին կանգնած կազմակերպութեան վարչիներ։ Այդ նոր Պիղատոսները սոսկական մարդիկ չեն։ Նոցա եհովան է տուել աղգի բազգը տնօրինելու իրաւունքը. ուստի միջոցների մէջ առանց խտրութիւն գնելու՝ գիւղում են իրենց նպատակին։ Սարքուում են կատակերգական ընտրութիւններ և ծնուռում են «քսան հազարանց ազգային ներկայացուցիչներ»։

Եղեկուայ արիւն թափող, աքսոր ու բանտ յանձն առնող ժողովրդին առաջնորդ և ղեկավար հանդիսանում են դաւանանքով և գաղափարներով բոլորովին նորան օտար այս անհատները. իրենց «կամքը», «հրամանը» փաթաթում նորա վզին և նորա անունով սկսում են արշաւանք այն եկեղեցու դէմ, որի անշունչ քարերն անդամ նուիրական են եղել ժողովրդի հոգուն։

Հարկաւ եկեղեցու այսօրուայ թշուառութիւնը այն չէ, որ քանդել, իրաւունքները խլել և կալուածները գրաւել մտածողներ կան, այլ այն, որ այսպիսի հանդամանքներում քիչ են եկեղեցու նախաձախնդիր հոգեսորականների թիւը, այնքան թոյլ եկեղեցու շահերը պաշտպանելու ձգտումը, որ նոյն իսկ շատ անմիտ պահանջներ ու

առնձգութիւններ արձագանք են դանում ժողովրդի մէջ։ Համեմատելով եկեղեցու այս թշուառութիւնը անցեալի հետ՝ շատ չնշին է և աննշան, սակայն դիմագրութեան ոյժը, որ այնտեղ հերոսութեան էր հասել, այստեղ նոյն իսկ կենդանութեան նշան ցոյց չի տալիս, Կարծես վերացել է այն կարգագրող, հրամայող ակնարկը, որով ամէն ոք իւր գործին պիտի գնար, իւր իրաւունքների և սահմանի մէջ պիտի պարփակուէր։ Այս կողմից է ահա, որ եկեղեցին տկարութեան նշաններ է ցոյց տալիս և տրամադրութիւն «յամենայն հօդմօյ շարժուելու», յամենայն բանէ խոռվելու, յամենայն իրաց դողալու։ Այլապէս հնարաւոր էր երեակայել անգամ մի այնպիսի «համագումար», որ «ազգային կենտրոնական ժողով»ի մեծահնչիւն անունով վերաբերուած, ճեմարանի հիւանդանոցում կամ ննջարանում նստած՝ Վաղարշապատի ու շրջակայրի անշափահամներին (ոմանք հասակով, ոմանք խելքով) գլխներին ժողովուած, շուռ էին տալիս եկեղեցական բոլոր կարգերն ու իրաւունքները, ծաղրում, հեղնում թէ կրօն և թէ կրօնապետ (յիշէք Փափաղեանի, Ահարօնեանի և Աթարէկեանի և այլոց ճառերը), չէին քաշուում դիակնել ժողովրդի գարեւոր նուիրական գաղափարներին և սրբութիւններին։

Ահա այսպիսի անդունդ է բացուել երեկուայ և այսօրուայ մէջ, մտքերի շփոթութիւն, իրաւանց սահմանների հարթութիւն և քառս ամենուրեք. «այժմ՝ մարտք ի ներքուստ և արհաւիրք արտաքուստ և խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր և յարմարէր ի պատերազմ»։

Այս վիճակը գուցէ շատերին յուսահատեցնում է. սակայն մեր յետեն է եկեղեցու պատմական անցեալը և աւանդութիւնը. Սորա հիւքը ձգել է Ա. Գրիգոր Լուսաւորիչ, քարերը կրել Աէդն Տրդատ, Ա. Հռիփսիմեանց արիւնը ծառայել է շաղախ, իսկ 1600 տարիների նախնեաց հոգին բարեխօս նորա անսասանութեան համար Ամենակալի աթոռի առաջ։